Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12 հոկտեմբեր 2023թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի պ/կ Մովսես Վարդանյանս վերանայելով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/23» ծածկագրով հրապարակված մրցույթի գնման ընթացակարգը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայտնում եմ Ձեզ, որ սույն թվականի փետրվարի 8-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար հանդերձանքի ձեռք բերման նպատակով հրապարկվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/23» ծածկագրով գնման ընթացակարգ, որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Երևան Տեքստիլ» ՍՊԸ-ն:

Համաձայն էլեկտրոնային աճուրդով ներկայացված գնային առաջարկների՝ «Երևան Տեքստիլ» ՍՊԸ-ն թիվ 9, 12 և 17 չափաբաժիններով ներկայացրել է ամենացածր գնային առաջարկները և գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ (աճուրդի ամփոփում, հայտերի գնահատում) ճանաչվել է ընտրված մասնակից վերը նշված երեք չափաբաժիններով: Անգործության ժամկետի ավարտից հետո, ս/թ մարտի 16-ին «Երևան Տեքստիլ» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագրի նախագիծ երեք չափաբաժիններով:

Հետագայում պարզ է դարձել, որ մասնակիցը թիվ 12 չափաբաժինը հանել է պայմանագրի նախագծից: Կատարված փոփոխությունը իրենից ենթադրում է տվյալ չափաբաժնով պայմանագիր կնքելուց հրաժարվել:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետը՝ **որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից,** գնման ընթացակարգը թիվ 12 չափաբաժնով հայտարարվել է չկայացած:
Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Երևան Տեքստիլ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելուն հաջորդող օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ «Երևան Տեքստիլ» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրենի պ/կ Մ. Վարդանյան